ՎԱՀԵ ՓԱՆՈՍՅԱՆ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մի շարք աղետալի բնական երևույթների նման տարիներ շարունակ ցեղասպանությունը դիտվել է որպես նմանատիպ մի երևույթ, որ տեղի է ունեցել առանց նախազգուշացման և առանց պատճառի: Նույնիսկ ցեղասպանությունից տուժողները շատ չեն խորացել այն հարցի մեջ, թե ցեղասպանության «հեղինակները» ինչո՞ւ և ինչպե՞ս այդ արեցին (Տե՛ս մատ. ցանկ, N 4, էջ 1):

Ցեղասպանության դրդապատճառները, որ տանում են զանգվածային կոտորածների, կարող են լինել միմյանցից խիստ տարբեր և բազմազան: Նկատենք, որ բոլոր այդ դրդապատճառների հիմքում ընկած է սոցիալական հոգեբանությունը: Իսկ մինչ այդ պարզենք, թե ինչ ասել է «ցեղասպանությունն», ընդհանրապես:

Ըստ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի (1948, դեկտեմբերի 9) ցեղասպանությունը բնորոշում է որպես.

ա) մարդկային խմբի ոչնչացում.

բ) էթնիկական խմբի անդամների հասցված՝ ֆիզիկական կամ մտավոր լուրջ վնաս.

գ) կյանքի պայմանների միտումնավոր վատթարացում, որը կտանի տվյալ խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացման.

դ) աննպաստ պայմանների ստեղծում, որ նպաստում է ծնելիության նվազեցմանը.

ե) բռնի ուժով տվյալ էթնիկական խմբի երեխաներին մեկ այլ խումբ տեղափոխելը (Տե՛ս մատ. ցանկ, N 11, էջ 19):

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՌԵՖԵՐԱՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեր ժամանակներում ցեղասպանությունը «սոցիալական ինժեներության» մի յուրահատուկ գործիք է, որի նպատակն է այս կամ այն սոցիալական կարգ ստեղծելը՝ իշխողների ծրագրերին համապատասխան: Ըստ ժամանակակից ցեղասպանության հեղինակների, հասարակությունը ենթակա է փոփոխման և ծրագրավորման՝ իրենց շահերին համապատասխան: Ուրեմն, ցեղասպանության հեղինակները կարող են ձգտել ստեղծել մի հասարակություն, որ իշխող լինի նախորդի նկատմամբ: Սակայն այստեղ հարց է առաջանում. արդյո՞ք հեղինակները կամ «ինժեներները» կարող են ստեղծել մի այնպիսի հասարակություն, որ համապատասխանի կատարյալ հասարակության չափանիշներին: Քանզի՝ եթե այդ հասարակությունը ծրագրավորում է, ապա լավ կլի-

նի, որ այն կատարյալ լինի, ինչպիսին կարող է լիներ արվեստի գործը:

20-րդ դարի ցեղասպանության վառ օրինակներ են 1915 թվի հայերի ցեղասպանությունը և երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում հրեական ջարդը:

20-րդ դարի սկզբներին մի կողմից՝ պանթուրքական գաղափարախոսությունը, մյուս կողմից՝ օսմանյան կայսրության անկումն էլ ավելի վատթարացրին հայերի սոցիալական պայմանները և, ընդհանրապես, նրանց դրությունը կայսրությունում: Հայերը, հանդիսանալով կայսրության ազգային փոքրամասնություններից մեծաքանակը, գլխավոր խոչընդոտն էին հանդիսանում պանթուրքական ծրագրերի իրականացման ճանապարհին: Առաջին աշխարհամարտը հարմար առիթ էր թուրքական կառավարության համար՝ հաշվեհարդար տեսնելու «անհնազանդ և վտանգավոր» հայ ազգաբնակչության հետ: Ինչպես հայտնի է՝ երիտթուրքերի ձեռնարկած Հայոց ցեղասպանության հետևանքով ոչնչացան է մոտ 1,5 միլիոն հայ (Տե՛ս մատ. ցանկ, N 7, էջ 61-62):

Մի փոքր ավելի ուշ՝ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ իրագործվեց հրեական ջարդը: Այն նախօրոք կանխամտածված, գիտականորեն մշակված մի միջոցառում էր, որի նպատակն էր ուղղել անցյալի «սխալները» և բարելավել գերմանական ազգի ռասայական կազմը: Ի տարբերություն նախորդ՝ Հայոց ցեղասպանության, հրեաների և գնչուների ոչնչացումն իրականանում էր տեխնոլոգիապես զարգացած մի ժողովրդի կողմից, որը մեծ ավանդ ուներ արևմտյան մշակույթի և գիտության զարգացման բնագավառներում:

Հիտլերը վարելով հակասեմիտական քաղաքականություն, ոչ միայն ֆիզիկապես ոչնչացրեց հազարավոր հրեաների, այլև բարոյական վնաս հասցրեց այդ ժողովրդին՝ նրան հեղինակազրկելով ողջ մարդկության առջև: Այսպիսով, Հիտլերն իր վրա վերցնելով «խաչակիրների» դերը և հաշվեհարդար տեսնելով հրեական ժողովրդի հետ, իր ժողովրդի առջև հանդես եկավ որպես «մեսիա»: Նա այն համոզման էր, թե իր գերմանացի ժողովուրդն ազնվացեղ է, սակայն որը հարձակման է ենթարկվել «սատանայի» կողմից՝ ի դեմս հրեաների: Հիտլերը բազմիցս անդրադարձել է այն փաստին, թե իբր հրեա ժողովուրդը սատանայի անձնավորումն է: Ուստի, նրա կարծիքով, պայքարելով հրեա ժողովրդի դեմ, այսինքն՝ «սատանայի» դեմ, ինքը սուրբ գործ է կատարում: Հետևանքը եղավ այն, որ Հիտլերն ու նացիստական գաղափարախոսությունը 6 միլիոն հրեաների ոչնչացման պատճառ հանդիսացան (Տե՛ս մատ. ցանկ, N 3, էջ 325):

Առաջին հայացքից թվում է, որ Հայոց ցեղասպանությունն ու հրեական ջարդն էապես տարբերվում են միմյանցից, սակայն ավելի խորանալով խնդրի մեջ, իրականում մենք տեսնում ենք մի շարք ընդհանրություններ: Նշենք, որ այդ ընդհանրությունների հիմքում ընկած է կրկին սոցիալ-հոգեբանությունը: Մյուս կողմից՝ հարց է առաջանում. ինչպե՞ս մարդ արարածը կարող էր թույլ տալ նման չարագործություններ: Եվ զարմանալին այն է, որ Հայոց ցեղասպանության և հրեական ջարդի հեղինակները ոչ թե անկառավարելի մի ամբոխ էին, այլ պաշտոնական անձինք՝ որոշակի կարգավիճակով ու սկզբունքներով: Նրանք այդ «պաշտոնականությունից» դուրս սովորական մարդիկ էին, որ ունեին ընտանիք, կին, երեխաներ, ընկերներ: Երբեմն անհավատալի է, որ այդ մարդիկ կրկին դառնալով «պաշ-

տոնական» անձինք վերածվում էին մարդասպանների (Տե՛ս մատ. ցանկ, N 1, էջ 151):

Վերոհիշյալ խնդրի սոցիալ-հոգեբանական կողմն ուսումնասիրելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել մարդկային էակների սադիստական բնույթը: Մեզ անհրաժեշտ է հասկանալ այդ հեղինակավոր հանցագործների հոգեբանությունը, թե ինչպե՞ս, լինելով միանգամայն նորմալ մարդ, նրանք կարող էին իրենց թույլ տալ այդպիսի աննկարագրելի անմարդկային արարքներ (Տե՛ս մատ. ցանկ, N 12, էջ 12-13): Միգուցե, նրանք այդ արարքները կատարելիս տվյալ պահին չե՞ն գիտակցել այդ ամենի ահավորությունը:

60-ական թվերին ամերիկյան մի հոգեբան՝ Սթեյնլի Միլգրամը, հետևյալ հոգեբանական փորձը կատարեց. նա նախօրոք առանձին սենյակներում առանձնացրեց երկու հոգու: Նրանցից առաջինը պետք է ժամանակ առ ժամանակ հատուկ սարքավորումների օգնությամբ էլեկտրական հարվածի օգնությամբ ազդեր երկրորդի հիշողության կենտրոնի վրա: Իրականում հոգեբանական այդ փորձի նպատակն էր՝ որոշել առաջինի էլեկտրական հարվածներ հասցնելու ունակության պատրաստակամությունը: Որքան ավելի էր առաջին սենյակում գտնվողը մեծացնում էլեկտրական հարվածների ուժգնությունը, այնքան ավելի էր մեծանում հոգեբանական կոնֆլիկտային իրադրությունը երկրորդի հետ: Ընդ որում՝ երկրորդի տառապանքները ստիպում էին առաջինին դադարեցնել այդ ամենը և ամեն անգամ, երբ նա հապաղում էր հարված հասցնել, նրա «վերադասը» հարկադրում էր այդ անել: Այստեղ առաջինին մնում էր ընտրություն կատարել. ենթարկվել «վերադասին» և շարունակել հարվածները կամ՝ լսել իր ներքին ձայնին, այսինքն՝ խղճին: Երբ նա, ի վերջո, ընտրեց այդ վերջինս, խզում տեղի ունեցավ իր և «վերադասի» միջև (Տե՛ս մատ. ցանկ, N 2, էջ 218-219): Այս փորձը կատարվեց 40 անձանց հետ, որոնցից 25-ը շարունակեցին 450 վոլտ հզորությամբ էլեկտրական հարվածներ հասցնելը (Տե՛ս մատ. ցանկ, N 2, էջ 220): Փորձերից ստացված արդյունքները Միլգրամին ստիպեցին գալ եզրահանգման. «Ցանկացած ուժի կամ հարկադրանքի դեպքում անհնազանդությունը նվազում է» (Տե՛ս մատ. ցանկ, N 14, էջ 121):

Վերոհիշյալ փորձի և ցեղասպանության միջև զուգահեռ անցկացնելու նպատակով փորձի մասնակիցներից առաջինին՝ էլեկտրական հարվածներ հասցնողին, փոխարինենք զինվորով, որը ենթարկվում է իր վերադասի կարգադրությանը: Սկզբում զինվորի առջև դրված պահանջի մեջ արտասովոր ոչինչ չկա, որը կապ ունենա հրամանը կատարող զինվորի բարոյական սկզբունքների հետ: Վերադասի հետագա հրամանների հետևանքով զինվորի՝ առաջին հայացքից սովորական թվացող գործողությունները դառնում են անմարդկային: Զինվորը գիտակցում է, որ այստեղ անհրաժեշտ է ինչ-որ սահման, սակայն չի գիտակցում, թե այդ սահմանը կամ սահմանանշանը որտեղ պետք է դնել: Երբ զինվորին տրվում են հետագա հրամանները, զինվորը խուճապի է մատնվում, քանի որ այս վերջին հրամաններն առաջինի հետ համեմատած մարդկային տեսակետից թվում են անիրագործելի: Այսպիսով ակնհայտ է դառնում, որ զինվորը հայտնվել է ծուղակի մեջ, քանի որ սկզբնական կարգադրությունները շատ սովորական բնույթի էին, սակայն նա չի կարող հրաժարվել հետագա գործողություններից, քանի որ հարկադրված է ենթարկվել իր «վերադասին» (Տե՛ս մատ. ցանկ, N 17, էջ 342):

Այստեղից՝ Միլգրամն արել է հետևյալ եզրակացությունը.

«Ամենասովորական մարդիկ այս կամ այն հանձնարարություն կատարելիս՝ իրենց կողմից առանց որևէ թշնամական մտադրության, կարող են դառնալ կործանարար պրոցեսի կատարողներ, նույնիսկ այն դեպքում, երբ նրանք վաղուց գիտակցում են այդ գործողության կործանարար բնույթը, քանի որ նրանց հրամայված է կատարել կամ իրականացնել այդ գործը՝ չնայած այն չի համապատասխանում բարոյականության չափանիշներին» (Տե՛ս մատ. ցանկ, N 2, էջ 216):

Հայտնի է, որ կյանքում որոշակի հանգամանքներ կամ բնավորության որոշակի գծեր անհատի համար նախապայման են ստեղծում՝ ընդունելու սոցիալական այս կամ այն դերը: Հաճախ հանցագործները հանցանք գործում են լսելով ոչ միայն իրենց ներքին ձայնը, կամ ելնելով ստեղծված իրավիճակից, այլ նաև այն պատճառով, որ նրանք կյանքում այդ դերն ունեն (Տե՛ս մատ. ցանկ, N 5, էջ 140): Հոգեբաններին հայտնի են դեպքեր, երբ մարդը որոշակի պայմաններում թույլ տալով այս կամ այն արարքը կարող է համարվել միանգամայն նորմալ: Հոգեբաններ Քրենն ու Բափորթն այն կարծիքի են, որ գերմանացի էսէսականներից միայն 10 տոկոսը կարող էր համարվել ոչ նորմալ: Համակենտրոնացման ճամբարներից մի կերպ հրաշքով փրկվածների վկայությամբ՝ էսէսականներից միայն եզակիներն էին աչքի ընկնում իրենց սադիստական դաժանությամբ: Մյուսներին էլ, բնականորեն, չէր կարելի պարկեշտ համարել, սակայն նրանք, փոքր ի շատե, ավելի տանելի էին: Ըստ Քրենի և Բափորթի՝ գերմանացի էսէականների մեծամասնությունն այսօր հեշտությամբ կանցներ հոգեբանական բոլոր քննությունները, որ սահմանված են այսօրվա ամերիկյան զինակոչիկի համար: Այլ խոսքով՝ բոլոր ժամանակներում էլ, լինեն ցեղասպանության հեղինակներ, գերմանացի էսէականներ կամ տասնյակ հազարավոր անմեղ մարդկային զոհերի հեղինակ՝ հանցագործներ, դրանք մեծամասնությամբ նորմալ մարդիկ են, սակայն, որոնք իրենց վրա զգում են այդ հանցանքները կատարելու պարտավորությունը, այսինքն՝ իրենց կարծիքով իրենց սահմանված է կյանքում կատարել սոցիալական այդ դերը (Տե՛ս մատ. ցանկ, N 9, էջ 2):

Այդուհանդերձ՝ հոգեբանները գալով այն եզրակացության, որ ցեղասպանության հեղինակներից յուրաքանչյուրը հեշտությամբ կհանձներ հոգեբանական ցանկացած քննություն, միաժամանակ այն համոզմանն են եկել, որ նրանք, անշուշտ, ունեցել են բարոյական շեղումներ: Միայն զարմանալ կարելի է, թե ինչպես Հայոց ցեղասպանության և հրեական ջարդի հանցագործները, առանց ունենալու որևէ պաթոլոգիկ շեղում, գործում էին իրենց կառավարական ինստիտուտների և քաղաքացիական գործակալների հետ համատեղ: Ուրեմն, այստեղ խնդիրը վերաբերվում է կառավարական բյուրոկրատական ապարատին ու բարոյականության սկզբունքներին: Երիտթուրքերն ու նացիստները հավասարապես այն կարծիքի էին, որ «անհնազանդ» զանգվածներին հիմնովին բնաջնջելն էր միակ ճիշտ ուղին: Այլ խոսքով՝ նրանց բարոյականության սկզբունքները բոլորովին այլ էին: Ուրեմն, երկու դեպքում էլ մենք գործ ունենք ոչ թե նորմալ կամ ոչ նորմալ համարվող հանցագործների հետ, այլ՝ բոլորովին տարբեր բարոյականության սկզբունքների տեր անձանց հետ (Տե՛ս մատ. ցանկ, N 17, էջ 329-330):

Զանգվածային ոչնչացման բյուրոկրատական և ինդուստրիացիոն մեթոդի գլխավոր նպատակը հպատակ ժողովրդին մարդկային հատկա-

նիշներից զրկելն էր: Օրինակ, համակենտրոնացման ճամբարներում բանտարկյալների հետ վարվում էին այնպիսի մեթոդներով, որ վերջիններս կորցնում էին իրենց մարդկային դեմքը: Ասենք, որ այս պրոցեսը սկսվում է հանցագործների կողմից ֆիզիկական և հոգեբանական անջրպետ ստեղծելով: Զոհերի և հանցագործների միջև այդ անջրպետը հետագայում այնքան է խորանում, որ այն, ի վերջո, հանգեցնում է, մարդկային տեսանկյունից անբարոյական գործողությունների: Իսկ ավելի ուշ՝ այդ գործողությունները հանգեցնում են լայնամասշտաբ կոտորածների:

Ըստ որոշ հոգեբանների՝ նաև ներկայումս որոշ դեպքերում ժամանակակից բյուրոկրատիայի նպատակներից մեկը ժողովրդին բարոյազրկելն է, այսինքն՝ արհեստականորեն ստեղծվում են պայմաններ, երբ մարդը կորցնում է իր մարդկային արժանապատվությունը, նա հուսալքված է, արհամարված, բարոյազրկված: Այդ բյուրոկրատների կարծիքով, այսպիսի մարդկանց հպատակեցնելը շատ հեշտ է, քանի որ նրանք չունեն այլևս իրենց հետաքրքրությունները, կարցրել են իրենց մարդկային դեմքերը, ուստի նրանք պետության համար լուրջ վտանգ չեն կարող ներկայացնել: Ժամանակակից բյուրոկրատական մոդելը ներառում է ցեղասպանության հիմնական տարրերը, այլ խոսքով, ներկայումս բյուրոկրատական մոդելը հավասարեցվում է ցեղասպանության հետ, որտեղ չի գործում մարդկային ոչ մի նորմ (Տե՛ս մատ. ցանկ, N 1, էջ 102-103):

Ըստ Զիգմունդ Բաումանի. «Բյուրոկրատական մոդելն ընդունակ է ձեռնարկել ցեղասպանական գործողություններ: Իսկ դա կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ օրենքը խախտողները (հանցագործները) և բյուրոկրատական ինստիտուտը հանդիպում են միմյանց» (Տե՛ս մատ. ցանկ, N 1, էջ 107):

Իսկ դիմադրո՞ւմ են արդյոք զոհերը զանգվածային կոտորածների, անմարդկային բռնարարքների ժամանակ: Այո՛, իհարկե: Հաճախ մարդիկ, անգամ այդպիսի օրհասական, քառսային իրավիճակներում, դրսևորում են մարդկային աներևակայելի հատկանիշներ, ինչպիսին են՝ տոկունություն, վճռականություն, ապրելու և պայքարելու ցանկություն: Եվ ինչպե՞ս է դա նրանց հաջողվում, երբ շուրջբոլորը մահ է ու քառսային իրավիճակ: Այդ ի՞նչ ուժ է, որ նրանց ստիպում է դրսևորել մարդկային վեհ հատկանիշներ:

Որպեսզի ժողովրդին (այլ խոսքով՝ զոհերին) դարձնեն հնազանդ և հեշտ կառավարելի, «վերադասերը» ժողովրդին դնում են հոգեբանական այնպիսի պայմանների մեջ, որոնք կստիպեն նրանց հավատալու, թե նրանք, իրոք, փրկվելու մի ինչ-որ միջոց ունեն: Այսպիսով, ժողովուրդը սկսում է հոգեբանական կախման մեջ գտնվել «վերադասներից» կամ հանցագործներից: Այսինքն, այդ պայմանները հարկադրում են մարդկանց ծանրութեթև անել իրենց վարքը և լինել ավելի հնազանդ (Տե՛ս մատ. ցանկ, N 5, էջ 204-206, 210-211):

Նացիստները, ժամանակին փորձելով օգտագործել հոգեբանական լծակները, հրեաներին տալիս էին ընտրության հնարավորություն: Նրանք այն կարծիքին էին, որ հրեաներին տալով ընտրելու հնարավորություն, կապահովեին ռացիոնալ վարքի ավելի բարձր հավանականություն: Նշենք, որ նացիստներին հաջողվում էր հասնել ցանկալի արդյունքների:

Հրեական, ինչպես նաև հայկական խնդրում, հանցագործությունների հեղինակները զոհերին հարկադրում էին ներգրավվել կենաց և մահու «խաղի» մեջ: Վերջիններիս գլխավոր նպատակը նման իրադրության մեջ

կենդանի մնալու ձգտումն էր դառնում: Այսինքն ժողովուրդն իր ուշադրությունն այլևս անկարող էր կենտրոնացնել այլ խնդիրների վրա: Հասնելով իրենց նպատակներին, իշխողները, տեսնելով նրանց ապրելու, կենդանի մնալու ձգտումը, ավելի էին ուժեղացնում ճնշումն իրենց զոհերի նկատմամբ (Տե՛ս մատ. ցանկ, N 1, էջ 143):

Այստեղ տեղին է կրկին նշել, որ նացիստներն իրենց նպատակներին հասնելու համար ամբողջովին առաջնորդվում էին հոգեբանական լծակներով, այլ խոսքով՝ նրանք հրեաների վրա ազդում էին հոգեբանորեն: Այսպես օրինակ, սկզբում վտանգվում են հրեաների նյութական միջոցները, անձնական իրերը, բնակարանները և այլն, այնուհետև՝ ոտնահարվում են մարդկային իրավունքները, ազատությունը, իսկ վերջում արդեն՝ կյանքը (Տե՛ս մատ. ցանկ, N 1, էջ 143): Հասնելով իրենց բարձրագույն նպատակներին, այսինքն, երբ վտանգվում է արդեն հրեաների կյանքը, նացիստներն այնպիսի պայմաններ էին ստեղծում, որ հրեաները բարձր գին վճարեն իրենց անձնական կյանքի համար: Այլ խոսքերով՝ նացիստներն այնպիսի պայմանների մեջ էին դնում հրեա ժողովրդին, որոնք նպաստում էին հրեաների մարդկային արժանապատվության անկմանը: Այսպիսի իրավիճակում հաճախ հրեաներն իրենք իրենց էին ոտնահարում: Ունևոր հրեաները մեծ գումարներ էին վճարում գերմանացիներին՝ անձնական կյանքը փրկելու համար, մինչդեռ չքավոր խավն անկարող էր այդ անել: Փաստորեն՝ մի կողմից նացիստների վարած քաղաքականությունը հրեաների հանդեպ ավելի անմարդկային էր դառնում, մյուս կողմից՝ հրեաների մեջ սրվում էին դասակարգային հակասությունները, կոռուպցիան և այլն:

Հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, ինչպես նշեցինք, ցեղասպանական իրադրություններում նույնիսկ մարդիկ հաճախ կարող են դրսևորել աներևակայելի հատկանիշներ, օրինակ, ապրելու վճռականություն, կամ կենդանի մնալու հույս: Օրինակ, վերապրողների վկայությամբ, անգամ Սիբիրյի անապատներում հայը երբեք ձեռքից բաց չէր թողնում գիրքը: Անգամ այդպիսի օրհասական պահին հայերը շարունակում էին իրենց մանուկներին սովորեցնել հայոց այբուբենը, միաժամանակ նրանց մեջ ներշնչելով ապրելու հույս և վճռականություն: Հայերը շատ լավ գիտակցում էին, որ եթե կորցնեն ապրելու հույսը, վճռականությունը, ապա կկորցնեին և իրենց սեփական կյանքը (Տե՛ս մատ. ցանկ, N 8, էջ 118-120): Պատահական չէ, որ հոգեբանները ցեղասպանական խնդիրներն ուսումնասիրելիս հաճախ հավասարեցնում են «գոյատևել» և «հույս» բառերը: Այսինքն՝ եթե մարդ հուսա, ուրեմն անպայման կգոյատևի: Առանց հույսի ցեղասպանության ժամանակ գոյատևելն անիմաստ է: Ուրեմն՝ մեծ է հոգեբանական ուժի դերը վերապրողների գոյատևման պարագայում: Հուսալքված մարդը դատապարտված է, քանի որ չկա ապրելու գլխավոր շարժիչ ուժը: Երբ մարդ մի կողմ է դնում ապրելու վճռականությունը, մահվան անխուսափելիությունը դառնում է իրական (Տե՛ս մատ. ցանկ, N 5, էջ 202-204):

Հետաքրքիր է անցյալում տեղի ունեցած անարդարության նկատմամբ վերապրողների հակազդեցության երևույթը: Բոյաջյանն ու Գրիգորյանն առանձնացրել են «վերապրողների սինդրոմի» դրսևորման երեք տեսակներ. գոյատևման մեղքի զգացում, տագնապի ախտանշաններ և ընկճվածություն (դեպրեսիա):

Վերապրողների մեղքի զգացումը մի յուրահատուկ դրսևորում է, որի ժամանակ վերապրողն իրեն մեղավոր է համարում հենց նրա համար, որ կարողացել է կենդանի մնալ: Տվյալ դեպքում նա անարդարացի է համարում այն, որ ինքը կարողացել է փրկվել, մինչդեռ իրենից ավելի արժանիները, որոնք, իր կարծիքով, ապրելու ավելի մեծ իրավունք են ունեցել (օրինակ՝ մտավորականները) ցեղասպանության զոհ են դարձել (Տե՛ս մատ. ցանկ, N 7, էջ 178):

Մյուս կողմից, տագնապի զգացումը, որ նա նկատելի է վերապրողների մոտ, միանգամայն հասկանալի է: Սովորաբար նման դեպքերում վերապրողները լինում են տխուր, ընկճված (դեպրեսիվ վիճակում): Այս երևույթը բացատրվում է նրանով, որ իրենք՝ վերապրողները, փաստորեն, կորցրել են իրենց հարազատներին (Տե՛ս մատ. ցանկ, N 7, էջ 179):

«Վերապրողների սինդրոմի» վերոհիշյալ երեք տեսակներից իր բնույթով համեմատաբար ավելի բարդ է երրորդը, որը հաճախ անվանվում է ռեակտիվ դեպրեսիա: Այլ խոսքով՝ վերապրողը շարունակաբար վիշտ է ապրում իր կորցրած հարազատների ու ընկերների համար: Փաստորեն, նա ներփակվել է իր ներաշխարհի մեջ և ոչ մի բոպե չի դադարում այդ վիշտն ապրելուց: Այստեղ, կարծես, ստեղծվում է շղթայական կապ (Տե՛ս մատ. ցանկ, N 7, էջ 80): Ըստ Զիգմունդ Ֆրեյդի, երբ մարդ երկար ժամանակ գտնվում է տագնապի վիճակի մեջ, նա, ի վերջո, փորձում է դուրս գալ այդ վիճակից՝ աշխատելով նվազեցնել այդ տագնապալի վիճակը: Այս դեպքում տվյալ անձի մոտ սկսում են ի հայտ գալ պաշտպանական մեխանիզմներ, որոնց հետևանքով իրականությունը տվյալ անձի կողմից սկսվում է ընկալվել յուրօրինակ ձևով: Ըստ Լորնա Միլլերի և Դոնալդի, երբ վերապրողն ինքն է փորձում դուրս գալ այդպիսի անցանկալի վիճակներից, դրսևորում է վարքի հետևյալ տեսակները. զայրույթ, վրիժառություն, ճնշում (ռեպրեսիա), ռացիոնալիզացում կամ համակերպվածություն և հաշտվողականություն (Տե՛ս մատ. ցանկ, N 7, էջ 187):

Ըստ Լորնա Միլլերի և Դոնալդի՝ վարքի դրսևորման մի տեսակի դեպքում անցյալի հիշողություններն այնքան ծանր են վերապրողի համար, որ նա փորձում է ճնշել, իրենից ետ վանել այդ մտքերը: Ռացիոնալիզացման վարքագծի դեպքում վերապրողը փորձում է տեղի ունեցածի մեջ արդարացում տեսնել: Այս երևույթը ելնում է կյանքին իմաստ տալու բուռն ցանկությունից: Վարքի դրսևորման մեկ այլ տեսակ է հաշտվողականությունը, որը հետևանք է ծայրահեղ անօգնականություն: Այլ խոսքով՝ վերապրողը գիտակցում է, որ ոչինչ չէր կարող անել կոտորածներից խուսափելու համար: Հաշտվողականության հետ անմիջականորեն կապ ունի մոռացումը, երբ տվյալ անձը ձգտում է մի կողմ դնել, մոռացության մատնել իր վիշտը, տխրությունը, որպեսզի ապագայի նկատմամբ լցվի հույսով, չհուսալքվի և, միաժամանակ, կարողանա ապագայում պաշտպանվել հոգեբանական բացասական երևույթներից (Տե՛ս մատ. ցանկ, N 7):

Աշխարհում չկա ոչինչ՝ ոչ մի դեղամիջոց, որ կարողանա բուժել այսպիսի հոգեկան ցնցումներ ապրած և հոգեկան վերքեր ստացած ժողովրդին: Սակայն մխիթարական է այն հանգամանքը, երբ շուրջդ զգում ես քո տառապանքը կիսող, քեզ հասկացող հանրության սատարումը: Սակայն, ի տարբերություն հրեաների, հայ վերապրողն այսօր չի զգում այդ սատարումը և իրեն հոգեպես հանգիստ զգալ չի կարող, քանի որ շատերի կողմից մերժվում է Հայոց ցեղասպանությունը: Այնուամենայնիվ, նույնիսկ

այսօր, հայ վերապրողը, չի հուսալքվում և համոզված է, որ կգա մի ժամանակ, երբ կպարզվի հայերի նկատմամբ անարդարությունը (Տե՛ս մատ. ցանկ, N 7, էջ 37, 181-183):

Յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը նշվում է որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Այդ օրը հազարավոր հայեր դուրս են գալիս զանգվածային երթի՝ արտահայտելու իրենց բողոքն անցյալում հայերի նկատմամբ տեղի ունեցած անարդարության նկատմամբ: Դա, միաժամանակ, բողոքի ճիչ է, հայոց խնդրի վրա առաջադեմ մարդկության ուշադրությունը բևեռելու միջոց: Հայկական մի շարք կազմակերպություններ, իրավաբանների և պատմաբանների համագործակցությամբ, փորձում են խնդրին քաղաքական որակ հաղորդել և պատասխանատվության ենթարկել մեղավորներին, որպեսզի հետագայում ևս չկրկնվեն նմանատիպ հանցագործություններ: Ֆրանսիայում, օրինակ, մի շարք հայ իրավաբաններ, որոնք ներկայացնում են հայկական խնդիրը, գործի են դրել «Գասյոթի օրենքը» (“Gassyot Law”): Այս օրենքը ստեղծվել է Ֆրանսիայում՝ նրանց դեմ, որոնք հերքում են մարդկության հանդեպ գործած որաշակի հանցանքներ, օրինակ, հրեական ջարդը (Տե՛ս մատ. ցանկ, N 10, էջ 2): Եկել է ժամանակը, երբ հայերը ձգտում են հայկական խնդիրը համայն մարդկությանը ներկայացնել իրավական տեսանկյունից:

Փաստ է, քանի դեռ կան չարագործներ, զոհեր միշտ էլ կլինեն: Այդքանով իսկ մեր առջև այժմ ծառայել է մի կարևոր խնդիր՝ ինչպե՞ս ջարդել չարության այդ շրջանակը: Այս խնդիրն, անշուշտ, կարող է լուծել մի երրորդ կողմ, արդարացի հոգով և գործով: Ահա այստեղ է, որ կարևորվում է ալտրուիստ դիտորդի (վկայի) դերը: Վեբստերի բառարանում ալտրուիզմը բնորոշվում է որպես «մյուսների խնդիրներին կամ շահերին անշահախնդիր մոտեցում կամ նվիրվածություն»: Որոշ սկեպտիկ մտածողներ (Մաքիավելլի, Հոբբես) այն կարծիքի են, որ նման վարքագիծ անհնար է, քանի որ մարդ արարածն ընդհանրապես անընդունակ է որևէ խնդրի մոտենալ՝ առանց ելնելու սեփական շահերի հայեցակարգից: Նույնիսկ այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Մարքսը, Ֆրեյդը և այլն, այն կարծիքի են եղել, որ մարդ հազվադեպ է դիմացինի շահերը վեր դասում սեփական հետաքրքրություններից (Տե՛ս մատ. ցանկ, N 15, էջ 4-6):

Հայերին կամ հրեաներին օգնելը ալտրուիզմի վարքագիծ է: Անշուշտ, ժամանակին եղել են մարդիկ, որ օգնության ձեռք են մեկնել հայերին կամ հրեաներին՝ սեփական շահերից ելնելով: Սակայն այստեղ մեր խոսքը դրանց մասին չէ, այլ այն անհատների՝ ովքեր ելնելով մարդկայնության սկզբունքներից ձեռք են մեկնում, առանց ակնկալելու նյութական շահ կամ վարձատրություն: Ե՛վ Առաջին, և՛ Երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ իրականացվում էին ցեղասպանությունները,հայ և հրեա ժողովրդին օգնություն ձեռք մեկնողների թիվը բավական մեծ էր: Ուրախալի փաստ է անշուշտ, երբ այդպիսի անհատները, նույնիսկ իրենց կյանքի գնով, դիմացինի շահերը վեր էին դասում սեփական հետաքրքրություններից (Տե՛ս մատ. ցանկ, N 13, էջ 3-9, 16): Փորձելով բացատրություն տալ մարդկային այսպիսի բարձրագույն հատկանիշների դրսևորմանը, սոցիալ-կենսաբանները պնդում են, որ ալտրուիստական վարքագծի հիմքում ընկած են գեները: Նրանք նաև այն համոզմանն են, որ մարդկությունը չէր կարող գոյատևել, եթե նրանց մեջ չլինեին այդպիսի անհատներ: Ի տարբերություն սոցիալ-կենսաբանների՝ որոշ հոգեբաններ այն կարծիքին են,

որ նման ալտրուիստական վարքագիծը պայմանավորված է սոցիալական միջավայրով (Տե՛ս մատ. ցանկ, N 15, էջ 8-11):

Ժամանակը նման վարքագծի բազմաթիվ փաստեր է պահպանել: Հայկական խնդրում այդպիսի վարքագծի վառ օրինակ է նկարագրված Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» գրքում, երբ ֆրանսիական նավատորմիղը փրկում է 4000 հայերի կյանքը, որոնք կարողացել էին քաջաբար դիմակայել թուրք ժանդարմների անմարդկային բռնություններին (Տե՛ս մատ. ցանկ, N 7, էջ 160): «Աննա Ֆրանկի օրագիրը» գրքում ևս ներկայացված է ալտրուիզմի վառ օրինակ՝ ի դեմս այն փաստի, որ հրեական երկու ընտանիքներ երկար ժամանակ թաքնվում էին նացիստներից: Նշենք, որ շատ հաճախ, երբ բարերարներն օգնության ձեռք էին մեկնում հայերին կամ հրեաներին նրանց օրհասական պահին, ելնում էին ոչ թե իրենց էթնիկական խմբի բարոյականության սկզբունքներից, դա, ավելի շատ, անհատական բնույթ էր կրում. որոշ բարերարներ ելնում էին իրենց անձնական բարոյական, զուտ մարդկային սկզբունքներից, մյուսները փորձում էին իրենց արարքով վերականգնել արդարությունը, ոմանք էլ ելում էին իրենց կրոնական սկզբունքներից:

Նկատենք, որ ալտրուիստական անհատականությունը ձևավորվում է ընտանեկան հարաբերություններում, երբ ծնողները ցուցաբերում են հոգատարության և մարդկային ու բարոյական այլ արժեքներ իրենց երեխաների և դիմացինի նկատմամբ: Այլ խոսքով՝ բարոյականության սկզբունքները ձևավորվում են ընտանիքում (Տե՛ս մատ. ցանկ, N 15, էջ 249-251):

Սակայն որոշ հոգեբանների կարծիքով՝ նման վարքագծի զարգացումը կախված է նաև այլ հանգամանքներից, օրինակ՝ որոշակի իրադրություններից: Սոցիալ-հոգեբանները գտնում են, որ ալտրուիստական վարքագծի դեպքում շատ կարևոր է զգալ օգնության ձեռք մեկնելու անհրաժեշտությունը:

Ի հակառակ դրա՝ հաճախ շրջապատի կողմից այս կամ այն անմարդկային արարքը չնկատելը (կամ չգիտակցելը) պատճառ է հանդիսանում ողբերգությունների: Օրինակ՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին այդպիսին էր գերմանացի քաղաքացիների վերաբերմունքը հրեա ժողովրդի հանդեպ: Փաստորեն, այդ նրանց կողքին էր, որ ոչնչանում էր հրեա ժողովուրդը նացիստների կողմից: Գերմանացի ժողովրդի «չտեսնել» կամ չգիտակցելն էր պատճառը, որ վերացան հազարավոր հրեա ընտանիքներ (Տե՛ս մատ. ցանկ, N 18, էջ 677): Ալտրուիստական վարքագծով անհատի զարգացման գործում պակաս կարևոր հանգամանք չեն ազգային սովորույթները: Օրինակ, հյուսիսային եվրոպական մի շարք ազգությունների մոտ, ինչպես նաև ԱՄՆ-ում բոլորովին ընդունված չէ, երբ ընտանեկան վեճերին միջամտեն մերձավորները կամ հարևանները, քանի որ այդ երկրներում գտնում են, որ իրենց տարաձայնությունները կամ ընտանեկան վեճերը խիստ անձնական են և ուրիշ ոչ ոք իրավունք չունի միջամտելու: Սա շատ վտանգավոր հանգամանք է, քանի որ այդպիսի անհատների մոտ զարգանում է անտարբերությունն ուրիշի խնդիրների նկատմամբ: Այստեղից է ծնվում ընդհանուր անտարբերությունն ուրիշի վշտի նկատմամբ: Եթե տվյալ հասարակությունում ընդունված չէ դիմացինի խնդիրների լուծմանը միջամտելը, ապա նման պայմաններում շատ դժվար է գիտակցել և հասկանալ օգնության ձեռք մեկնելու անհրաժեշտու-

թյունը: Այստեղից էլ ծնվում է այն անտարբերությունը, որ գոյություն ունի ազգային փոքրամասնությունների նկատմամբ, երբ վերջիններս հայտնվում են դժվար կացության մեջ: Իհարկե, քիչ չեն պատահում կյանքում ալտրուիստական վարքագծով անհատներ, սակայն այսպիսի անհատները նախքան օգնության ձեռք մեկնելը պետք է հաղթահարեն մի շարք բարոյահոգեբանական արգելքներ: Օրինակ, նրանք պետք է ծանրութեթև անեն այն փաստը, որ օգնելուց հետո, հնարավոր է, որ նրանք կորցնեն իրենց աշխատանքը, հանրության հարգանքը և այլն, քանի որ նրանց սոցիալական հասարակությունում ընդունված չէ միջամտել դիմացինի խնդիրներին, եթե անգամ նրանց կյանքին վտանգ է սպառնում (Տե՛ս մատ. ցանկ, N 18, էջ 678-681):

Զարմանալի է, թե ինչո՞ւ հաճախ անտեսվել կամ քիչ ուշադրության է արժանացել այն փաստը, երբ ոչ քրիստոնյա անհատներն են օգնել հայերին կամ հրեաներին: Ուրեմն, այստեղ խնդիրն ի՞նչն է: Որոշ հոգեբաններ-ի կարծիքով՝ այստեղ խնդիրը վերաբերում է տվյալ իրադրությունը, դրա դրդապատճառները, անշուշտ իրատեսորեն գնահատելու և գիտակցելու և, իհարկե, դիմացինի կրած տառապանքները զգալու կարողությանը:

Հայոց ցեղասպանության և հրեական ջարդի տարիներին այս երկուսի զուգակցումն էր, որ առանձին անհատների մղեցին օգնության ձեռք մեկնել զոհերին: Նրանց կարեկից վերաբերմունքն էր, որ ջնջեց իրենց և ազգային փոքրամասնությունների միջև տիրող անջրպետը: Սակայն այդպիսի անհատները փոքր թիվ էին կազմում: Գուցե պատճառը նրանց անտեղյակությունն էր մարդկային ողբերգություններին:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ մարդկային ողբերգություններ-ի (տվյալ դեպքում՝ Հայոց ցեղասպանության և հրեական ջարդի) հիմքում ընկած են սոցիալական և բարոյահոգեբանական շարժառիթներ: Այսօր ևս երկրագնդի տարբեր հատվածներում շարունակում են տեղի ունենալ փոքր ու մեծ ցեղասպանություններ կամ մարդկային այլ ողբերգություններ: Հետագա ցեղասպանությունները կամ ողբերգությունները կանխելու գործում շատ մեծ է սոցիալական միջավայրի, անհատների կարեկից և գիտակից վերաբերմունքը դիմացինի նկատմամբ: Եթե մենք ճիշտ չկարողանանք գնահատել տվյալ իրադրությունը և չգիտակցենք մեր պատասխանատվությունը շրջապատի նկատմամբ, հետագայում շատ դժվար կլինի կանխել նմանատիպ ողբերգությունները:

Կազմեց՝ ՀԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

ԹԵՄԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

1. Bauman, Zygmunt, Modernity and the Holocaust, Cornell University Press, Ithaca, New York, 1989.
2. Behrens, Laurance and Rosen, Leonard J., Writing and Reading Across the Curriculum. Scott, Foresman and Company, Glenview, Illinois, 1988.
3. Chalk, Frank and Jonassohn, Kurt, The History and Sociology of Genocide, Yale University Press, New Haven, Connecticut, 1988.
4. Charney (1), Israel W, Genocide: A Critical Bibliographic Review. Facts on File, Inc., New York, New York, 1988.
5. Charney (2), Israel W, How Can We Commit the Unthinkable. Westview Press, Inc., Boulder, Colorado, 1982.
6. Daniel, Edythe, Counterpoint in Literature. Scott, Foresman and Company, Glenview, Illinois, 1976.
7. Hovannisian, Richard G., The Armenian Genocide in Perspective, Transaction Publishers, New Brunswick, New Jersey, 1988.
8. Isahakian, Avedik, "The Undying Spirit," Aleak Publishing, Tehran, Iran, 1976.
9. Kern, George M. and Rappoport, Leon, The Holocaust and the Crisis of Human Behavior, Holmes & Meir Publishing, New York, New York, 1980.
10. Kouymjian, Dickran, "Denial of Genocide: The Bernard Lewis Case," *Asbarez*, vol 86:2, 12/24/1994.
11. Kuper, Leo, Genocide, Yale University Press, New Haven, Connecticut, 1981.
12. Lachs, John, Responsibility of the Individual in Modern Society. Harvester Publishing, Bringhton, 1981.
13. Meltzer, Milton, Rescue, Harper Row Publishers, New York, New York, 1988.
14. Milgram, Stanley, Obedience to Authority: An Experimental View. Tavistock Publishing, London, England, 1974.
15. Oliner, Samuel P. and Oliner, Pearl M., The Altruistic Personality. Collier Macmillian Publishers, London, England, 1988.
16. Plotnick, Rod, Introduction to Psychology. Random House, New York, New York, 1989.
17. Sabini, Johm P. and Silver, Maury, Destroying the innocent with a Clear Conscience: A Sociopsychology of the Holocaust. Hemisphere Publishing Corporation, Washington D. C., 1980.
18. Travis, Carol and Wade, Carol, Psychology. Harper & Row Publishers, New York, New York, 1987.